

А. Н. ТЕР-ГЕВОНДЯН — *Армения и арабский халифат*, Изд. АН АрмССР, Ереван, 1977, 322 стр., цена 2 р. 28 к.

Ա. Ն. ՏԵՐ-ՂԵՎՈՆԴՅԱՆ.—*Հայաստանը և արաբական խալիֆայությունը, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1977, 322 էջ, գինը 2 ռ. 28 կ.*

Հայ և արաբ ժողովուրդների միջև գոյություն ունեցող տնտեսական, քաղաքական և մշակութային կապերը դարավոր պատմություն ունեն և, բնականաբար, միշտ էլ հանդիսացել են հայ արաբագետների և պատմաբանների հետազոտության առարկա։ Այդ հետազոտությունները լայն ծավալ ստացան հատկապես վերջին տասնամյակներում, և հայ գիտնականների աշխատանքներն սկսեցին միջազգային ճանաչում ձեռք բերել։

Գրախոսվող աշխատությունը բաղկացած է ինը գլխից։ Քաջ տիրապետելով մի շարք օտար լեզուների, հեղինակը հայկական, արաբական, բյուզանդական, ասորական և այլ աղբյուրների հիման վրա մանրամասն ուսումնասիրության է ենթարկում Հայաստանի քաղաքական անցուղարձեքը մինչև տրտմաների էջմից նրա նվաճումը, արժեքավոր տեղեկություններ է տալիս արաբական արշավանքների, Օմայան և Աբբասյան խալիֆաների օրոք մեր երկրում տիրող քաղաքական, տնտեսական և սոցիալական դրության, վարչական բաժանման, կառավարման, հարկային սիստեմի և ագրարային հարաբերությունների վերաբերյալ, խոսում է բազրատունյաց շրջանում անկասկածաբար նվաճած հայ թագավորների և արաբ խալիֆաների փոխհարաբերությունների մասին։ Վերջում առանձին գլուխ է հատկացված մուսուլման ու քրիստոնյա արաբների և հայերի մշտական և գրական առնչություններին։

Արաբական աղբյուրներից Տեր-Ղևոնդյանը հատկապես նշում է IX դարի հեղինակներ Ահմեդ ալ-Բալազուրիի «Քիթաբ ֆութուհուլ Բուլղան» գիրքը, խորասանցի Ահմեդ ալ-Յակուբիի գիրքը, որն աչքի է ընկնում իր ճշգրտությամբ և արժեքավոր աղբյուր է խալիֆաների՝ Հայաստանում վարած քաղաքականության ուսումնասիրման համար, Աբու Ջաաֆար աթ-Թաբարիի «Թարիխ ար-ռուսուլ ուալմուլուք» բաղմահատոր աշխատությունը, որը հարուստ նյութեր է պարունակում Հայաստանի և արաբական խալիֆայությանը ենթակա այլ երկրների մասին։ 956 թ. մահացած Աբու Հասան ալ-Մասուդին այն հաղվապետ արաբ հեղինակներից է, որը մեծ հետաքրքրություն է ցուցաբերել այլազգի, հատկապես կովկասյան ժողովուրդների պատմական տրագիդիաների նկատմամբ։ Նրա «Մուրուջ ազ-զահար ուա մա ադեն ալ-շուահեր»

գիրքը նույնպես օգտագործված է գրախոսվող աշխատությունում։ VII—XIII դդ. Հայաստանի պատմության վերաբերյալ հետաքրքիր տվյալներ է պարունակում Ալի Իրն էլ-Ասիի «Ալ քամիլ ֆիթ-Թարիխ» գիրքը։

Վերոհիշյալ աղբյուրներից բացի Տեր-Ղևոնդյանը նշում է արաբական շրջանի հայ պատմագրության համար արաբ աշխարհագետների ստեղծագործությունների նշանակությունը։ Ղրանցից են հատկապես ծագումով պարսիկ Իրն Խորդադբեհի «Քիթաբուլ մասալեք ուալ-մամալեքը», պատմաբան ալ-Յակուբիի «Քիթաբուլ Բուլղանը», Իբնուլ Ֆաթհի նույն վերնագիրը կրող գրքերը և այլ արաբ աշխարհագետների գործերը։

IX—X դդ. բոլոր արաբ հեղինակների մոտ շատ տվյալներ կան Հայաստանի տնտեսական կյանքի և առևտրական-կարավանային ճանապարհների մասին, սակայն Հայաստանի և նրա հարևան երկրների վերաբերյալ արտակարգ հարուստ տվյալներ է պարունակում Յակուբ Ալ-Համավիի «Մուշամուլ Բուլղանը»։

Համաշխարհային երկրորդ պատերազմից հետո հրապարակվեցին մի շարք արաբ հեղինակների ձեռագրեր, որոնք նույնպես կարևոր աղբյուր են արաբական տիրապետության և Բագրատունյաց ժամանակաշրջանի Հայաստանի պատմական իրադարձությունների լուսաբանման համար։ Այսպես, օրինակ, Սիրիայում լույս են տեսել Հայաստանի պատմության վերաբերյալ մի շարք աշխատություններ, որոնցից ամենանշանակալիցն է Ադիբ աու-Սայյեդի «Հայաստանը արաբների պատմության մեջ» աշխատությունը, որը նվիրված է հայ-արաբական հարաբերություններին խալիֆայության օրոք։

Իր աշխատության մեջ Ա. Տեր-Ղևոնդյանը նշում է հայ և օտարազգի բաղմաթիվ այլ հեղինակների գործերը, որոնցում նույնպես այս կամ այն չափով ուսումնասիրվում են հայ-արաբական փոխհարաբերությունները։

Կուտակված այս մեծաքանակ նյութերի մանրակրկիտ ուսումնասիրության հիման վրա հեղինակը խալիֆայության հետ Հայաստանի առնչությունների պատմությունը բաժանում է երեք շրջանի։ Դրանցից առաջինը VII դարն է, երբ Հայաստանը, շնորհիվ Բյուզանդական կայսրության և խալիֆայության միջև գոյու-

թյուն ունեցող հակասությունների, վայելում է որոշ քաղաքական ինքնուրույնություն, իր շեզոք քաղաքականության շնորհիվ որոշակի հաջողություններ է ունենում տնտեսության ու մշակույթի բնագավառում: Նրկրորդ շրջանը բուն խալիֆայության տիրապետության շրջանն է (VIII դարից մինչև IX դարի կեսերը), երբ մեր երկիրը վեր է ածվում արաբական հզոր պետության նահանգի: Այդ ժամանակաշրջանը խոր ազդեցություն է թողնում Հայաստանի և նրա հարևան երկրների քաղաքական, տնտեսական և մշակութային կյանքի վրա և փոխվում են ֆեոդալական հողատիրության ու հարկային սխտեմները, նախարարական որոշ տոհմեր քայքայվում են, ուրիշները՝ հզորանում, զարգանում է խոշոր հողատիրությունը, ընդարձակվում են եկեղեցական կալվածքները, խալիֆայության գրեթե բոլոր երկրներում տեղի են ունենում էթնիկական խոր փոփոխություններ: Այս շրջանի հայ-արաբական փոխհարաբերությունները բնորոշվում էին որպես իշխողի և իշխվողի հարաբերություններ և հայերը, բնականաբար, ձգտում էին վերանվաճել իրենց անկախությունը: Այդ բանը հաջողվում է իրականացնել Բագրատունիների տոհմին, որի օրոք երկիրը անկախություն է ձեռք բերում և կյանքի բոլոր բնագավառներում նոր վերելք է ապրում: Հենց դա էլ հանդիսանում է երրորդ շրջանը, երբ դարգանում են առևտրական, տնտեսական և մշակութային կապերը Հայաստանի և արաբական երկրների միջև, երբ Հայաստանում սկսում է ֆեոդալիզմի զարգացման շրջանը:

Առանձնապես արժեքավոր է գրքի այն բաժինը, որտեղ հեղինակը հայ և օտար աղբյուրների, հին դրամների և Բագրատունյաց շրջանի առաջին մայրաքաղաք Դվինի պեղումների ընթացքում հայտնաբերված իրերի և արձանագրությունների ուսումնասիրման հիման վրա տալիս է Հայաստանի արաբ կառավարիչների լրիվ ցուցակը (սկսած 693 թ. մինչև 884 թ.): Դրանում ընդգրկված են 118 արաբ կառավարիչների (ոստիկանների) անուններ, որոնցից առաջինը եղել է Մուհամեդ Բեն Մարվանը, իսկ վերջինը՝ Իսա Բեն Շայխը, որը խալիֆայի կողմից նվիրված թագով 884 թ. թագադրում է Աշոտ Բագրատունուն:

Գրքի 8-րդ գլխում Ա. Տեր-Ղևոնդյանը մանրակրկիտ ուսումնասիրության է ենթարկում հայկական թագավորության և արաբական խալիֆայության միջև քաղաքական և տնտեսական կապերի զարգացումը, նշելով, որ IX դարի 80-ական թթ. տիրող քաղաքական իրադրությունը նախատավոր է եղել հայկական թագավորության հռչակման համար. արբասյան խալիֆայությունը սաստիկ թուլացել էր, իսկ Բյու-

զանդիան դեռևս ի վիճակի չէր իր տիրապետությունը տարածելու Արևելքի վրա:

Ինչպես հայտնի է, այդ ժամանակաշրջանում խալիֆայության ենթակա երկրներով էին անցնում կարավանային առևտրի կարևորագույն ճանապարհները, որոնք Միջերկրականի ափերը կապում էին Հնդկաստանի և Չինաստանի հետ: Այդ ճանապարհները գլխավորապես անցնում էին Վերին Միջադեմքի և Հայաստանի վրայով, և դրանց վրա էլ ընկած էին այն խոշոր քաղաքները, որոնք դարձել էին աշխույժ առևտրի, արհեստների ծաղկման և դրամական գործարքների կարևոր կենտրոններ: Հայաստանում սկսում են բարգավաճել մի շարք քաղաքներ՝ Դվինը, Անին, Կարսը, Մուշը, Վանը, Նլաթը և այլն, որոնք առևտրական սերտ կապերի մեջ են մտնում Դամասկոսի, Բաղդադի, Բասրայի, Անտիոքի, Ալեքսանդրիայի, Ֆուստատի, Շիրազի, Իսպահանի, Սամարկանդի, Բուխարայի և այլ քաղաքների հետ: Դվինի հնագիտական պեղումների տվյալները խոսում են Հայաստանի և խալիֆայության երկրների միջև առևտրական սերտ կապերի առկայության մասին:

Հայ-արաբական մշակութային կապերին նվիրված գլխում հեղինակը արժեքավոր նորություններ է մեջբերում: Այդ կապերն սկսեցին աշխուժանալ դեռևս Բագրատունիների օրոք և շարունակվեցին մինչև XII—XIII դդ., որից հետո աստիճանաբար թուլացան: Սկզբնական շրջանում հայերի և արաբների միջև գրական ուղղակի առնչություններ գոյություն չեն ունեցել: Հայաստան այցելող արաբները ծանոթացել են բերնեբերան ավանդվող ստեղծագործություններին, առասպելներին և լեգենդներին (օրինակ՝ հայոց ծագման, Մասիս սարի, Արաքո գետի, Արա Գեղեցիկի և Շամիրամի առասպելները, Սասունցի Դավիթ ժողովրդական էպոսը և այլն), հետագայում դրանք մշակել, ձևափոխել և տարածել են արաբական միջավայրում: Քրաբական գրականությունից VIII—IX դդ. հայերի մոտ հետաքրքրություն էր առաջացնում միայն Ղորանը, ու թեև Ղորանի մեզ հասած թարգմանությունները XIV դարում կատարված նմուշներ են, սակայն հիմք կա ենթադրելու, որ նա հայերեն է թարգմանվել ավելի վաղ շրջանում: Հետագայում հայերը մեծ հետաքրքրություն են ցուցաբերել արաբական բժշկագիտության, այլ գիտությունների և գեղարվեստական արձակի նկատմամբ, դրանցից մի շարք թարգմանություններ են կատարել. իսկ հայ ակադեմիկոսներ Մխիթար Հերացին, Ամիրզովլաթ Ամասիացին և ուրիշներ մեծապես օգտվել են արաբներից: Հայերի մոտ մեծ ժողովրդականություն է վայելել «Հազար ու մեկ գիշերներ» հեքիաթաշարը և հատկապես «Պղնձե քա-

ղաթի պատմությունը»։ Հայերենից արաբերենի կատարված թարգմանություններից հայտնի է Աղաթանգեղոսի «Պատմություն հայոցը»։ Հետազոտում թարգմանվել է նաև Վարդան Այգեկցու «Աղվեսագիրքը»։ Տեր-Ղևոնդյանն իրավացիորեն նշում է, որ VIII—XIII դդ. հայ-արաբական գրական-մշակութային կապերը ղեկավար շատ քիչ են ուսումնասիրված և կարիք ունեն ընդարձակ հետազոտության։

Հայաստանը և արաբական խալիֆայությունը՝ դիրքը իրավացիորեն կարելի է համարել արժեքավոր ներդրում հայ-արաբական մշակութային կապերի զարգացման գործում և կարելի է աշխատություն, որը կարող է օգտակար լինել արաբական շրջանի հայ պատմագրությանը հետաքրքրվողների համար։

Հ. ԴԱԴՈՒՐՅԱՆ

GUY LAFONTAINE, *La version arménienne des oeuvres d'Aphraate le Syrien*, „Corpus Scriptorum Christianorum Orientalium“ 382 Arm. 7 (texte), 383 Arm. 8 (traduction), Louvain, 1977.

ԳԻ ԼԱՖՈՆՏԵՆ, Ափրահատ Ասորու երկերի հայերեն թարգմանությունը, 2 հատորով, Լուվեն, 1977:

Բելգիայում հրատարակվող «Արևելաքրիստոնեական գրողների մատենաշարի» 382—383 հատորներում անցյալ տարի Գ. Լաֆոնտենի աշխատասիրությամբ լույս տեսան Ափրահատի ճառերի հայերեն քննական-համեմատական քննադրը և նրա լատիներեն թարգմանությունը։ Ափրահատի դավանաբանական ժողովածուն, որն ընդգրկում է 23 ճառ՝ գրված 337—345 թթ., պատկանում է ասորական գրականության ուշագրավ հուշարձանների թվին։ Ստեղծված լինելով Պարսից տերության տարածքում, այն զերծ է մնացել հունահռոմեական ազդեցությունից և այդ պատճառով մեծ հետաքրքրություն է ներկայացնում բուն արևելյան դավանաբանական մտքի ուսումնասիրման տեսակետից։ Հատկապես նշանակալից են քերիստոնեության և հուդայականության հակասությունները լուսաբանող ճառերը։ Ինչ վերաբերում է ժողովածուի գեղարվեստական և լեզվական արժանիքներին, ապա բանասիրության մեջ այն համարվում է դասական ասորերենի լավագույն նմուշներից մեկը։

Ափրահատի ճառերի ասորերեն քննադրն առաջին անգամ տպագրվել է 1869 թ. Վ. Ռայտի աշխատասիրությամբ¹։ Երկրորդ հրատարակությունն իրագործել է Յ. Փարիզոն 1894—1907 թթ.²։ Սակայն Ափրահատի ժողովածուն բանասիրությանը հայտնի էր այս հրատարակու-

թյուններից շատ առաջ՝ շնորհիվ նրա հնագույն հայերեն թարգմանության³։ Վերջինս ընդգրկում է ժողովածուի առաջին 19 ճառերը. XX—XXIII-ը պակասում են (ամենայն հավանականությամբ կորել են և ոչ թե չեն թարգմանվել)։ Հայերեն թարգմանությունը, հետազոտողների կարծիքով, կատարված պետք է լինի V դարի առաջին կեսին⁴։ Ափրահատի ճառերը հայ իրականության մեջ հայտնի են IV դարի մի այլ նշանավոր ասորի հեղինակի՝ Հակոբ Մծրնացու (մահ. 338 թ.) անունով։ Ընդ որում, այս վերագրումը կատարվել է շատ վաղուց, քանի որ մեղ հասած բոլոր ձեռագրերն էլ կրում են նրա անունը։ Գրքի հետ միասին Հակոբ Մծրնացուն

3 Հայերեն թարգմանության մասին մանրամասն տե՛ս. Գ. Զարբհանալյան, Մատենադարան հայկական թարգմանութեանց նախնեաց (դար Դ—ԺԳ), Վենետիկ, 1889, էջ 20—46. Լ. Parisot, Aphraatis..., t. 1, էջ XXXI—XXXIX. Ե. Տեր-Մինասյան, «Զգոն» կոչված գրքի հեղինակի հարցը, «Պատմա-բանասիրական հանդես», 1964, № 1, էջ 257—264. Նույնը՝ Ե. Տեր-Մինասյան, «Պատմա-բանասիրական հետազոտություններ», Երևան, 1971, էջ 411—424 և այլն։

4 Տե՛ս Գ. Զարբհանալյան, Մատենադարան..., էջ 44. Ե. Տեր-Մինասյան, «Զգոն»..., էջ 423. Գ. Լաֆոնտենը հայերեն թարգմանությունը դնում է V դարի երկրորդ կեսին, տե՛ս G. Lafontaine, Pour une nouvelle édition de la version arménienne des „Démonstrations“ d'Aphraate, «Բաղմա-վես», 1975, էջ 366. La version..., „CSCO“, 382 Arm. 7, էջ IX, „CSCO“ 383 Arm. 8, էջ V.

¹ W. Wright, The Homilies of Aphraates, the Persian Sage, edited from syriac manuscripts of the fifth and sixth century in the Britisch Museum, London, 1869 (non vidi).

² L. Parisot, Aphraatis Sapientis Persae Demonstrationes, „Patrologia Syriaca“, pars I, t. 1—2, Paris, 1894—1907.